

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 42/15

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.06.2018թ. N4200379 արձանագրության դեմ Ա/Ձ Շարա Մեսրոպյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Շարա Մեսրոպյանը հայտնում է, որ մինչև տվյալ գործարքի իրականացումը ֆիզիկական անձանց հետ կանխիկ գործարքներ չի կատարել (մանրածախ վաճառք չի իրականացրել), ուստի անհրաժեշտություն չի եղել հսկիչ դրամարկղային մեքենա ներդնելու: Արձանագրված գործարքի ժամանակ իր աշխատակիցը տեղեկացրել է, որ գնորդ է մոտեցել տախտակ գնելու համար: Ա/Ձ Շարա Մեսրոպյանը զգուշացրել է, որ մինչև իր մոտենալը գնորդի տվյալները վերցնի, որպեսզի հարկային հաշիվ և կանխիկ մուտքի դրամարկղային օրդեր տրամադրվի: Սակայն աշխատակիցը չի մանալով օրենքի պահանջները վերցրել է կանխիկ գումարը: Այդ ժամանակ հարկային տեսչության աշխատակիցները ներկայացել են և հայտնել, որ Ա/Ձ-ի մոտ կատարվում է հսկիչ գնում: Տվյալ գումարի համար գրվել է կանխիկ դրամարկղային մուտքի օրդեր, սակայն հարկային հաշիվ դուրս չի գրվել, քանի որ բացակայել է ֆիզիկական անձի անձնագրային տվյալները: Ա/Ձ Շարա Մեսրոպյանն ընդունում է, որ կատարվել է իրավախախտում, սակայն ոչ միտումնավոր, և դա կրել է տեխնիկական բնույթ: Այսինքն, դա ընդամենը ժամանակի հարց էր և միանշանակ տրամադրվելու էր գործարքի իրականացման համար անհրաժեշտ օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը:

Հաշվի առնելով շարադրվածը, Ա/Ձ Շարա Մեսրոպյանը խնդրում է հաշվի առնել իրավախախտման հիմք հանդիսացած հանգամանքները և կիրառել պատասխանատվության «Նախազգուշացում» տեսակը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 08.05.2018թ. N4200379 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Շարա Մեսրոպյանի մոտ կատարվել է հսկիչ գնում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.06.2018թ. N4200379 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Արթուր Ղարոյանի կողմից 24.05.2018թ. ժամը 10:50-ին Ա/Ձ Շարա Մեսրոպյանին պատկանող Առինջ, գ. թաղամաս, գազալցակայանի հարևանությամբ հասցեում գտնվող առևտրի կետից կատարվեց հսկիչ գնում 6000 դրամի չափով՝ գնվեց եզրահան տախտակ 6մ*0.12մ*0.04մ չափի, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ՝ 6000 դրամ: Ա/Ձ Շարա Մեսրոպյանը կատարված հսկիչ գնման արդյունքում դուրս չգրեց էլեկտրոնային հարկային հաշիվ կամ այլ հաշվարկային փաստաթուղթ, ինչպես նաև չտրամադրեց ՀԴՄ կտրոն (Ա/Ձ-ն չունի տեղադրված ՀԴՄ) և դրամարկղի մուտքի օրդեր 6000 դրամի չափով: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Արդյունքում Ա/Ձ Շարա Մեսրոպյանի կողմից խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համար ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին կետի 1 ենթակետի համաձայն առաջադրվում է տուգանք 300.000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին կետի 1 ենթակետի համաձայն՝ օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված՝ տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 300.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում գլխավոր հարկային տեսուչ Արթուր Ղարոյանի կողմից 24.05.2018թ. ժամը 10:50-ին Ա/Ձ Շարա Մեսրոպյանին պատկանող առևտրի կետից կատարվել է 6000 դրամի հսկիչ գնում: Սակայն հսկիչ գնման արդյունքում դուրս չի գրվել էլեկտրոնային հարկային հաշիվ կամ այլ հաշվարկային փաստաթուղթ, ինչպես նաև չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, քանի որ ՀԴՄ տեղադրված չի եղել: Այսինքն, տվյալ դեպքում Ա/Ձ Շարա Մեսրոպյանի կողմից խախտվել են ՀՀ հարկային

օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի և 381-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, ինչն ընդունում է նաև Ա/Ձ Շարա Մեսրոպյանը:

Ինչ վերաբերում է Ա/Ձ Շարա Մեսրոպյանի միջնորդությանը՝ կապված ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության «Նախագգուշացում» տեսակը կիրառելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ այն հիմնավոր չէ, քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անկախ նույն հոդվածի 1-ին մասի դրույթներից, դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջներին չբավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության հայտնաբերման առաջին դեպքում կիրառվում է նախագգուշացում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում հիմնավորվել է Ա/Ձ Շարա Մեսրոպյանի կողմից Արձանագրությունում նշված իրավանորմերի պահանջների խախտման հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.06.2018թ. N4200379 արձանագրության դեմ Ա/Ձ Շարա Մեսրոպյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ